

Լուսիկ Մկրտչյան

ԲՐԱԲԻՈՆ ԳՐԶՈՒՀԻՆ

(1750—1835 թթ.)

Հայ կանայք իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել ձեռագրերի ընդօրինակման ու նկարազարդման մեջ: Մինչև այժմ մեզ հայտնի են 22 կին գրչուհիներ, որոնք ընդօրինակել են 1—3-ական ձեռագրեր՝ սկսած XIII դարից մինչև XIX դարը: Հայ գրչուհիների մեջ ամենից բազմավաստակը Բրաբիոն գրչուհին է:

Բրաբիոն գրչուհին XVIII դարի հայ մշակույթի ակտիվ գործիչներից է: Նա իր եղբոր՝ Մատթեոս դպրի օգնությամբ սովորել է ձեռագիր ընդօրինակելու արվեստը: Գրչուհին ապրել ու աշխատել է Կ. Պոլսի Պալատ թաղի ս. Հրեշտակապետ եկեղեցուն առնթրի կացարաններից մեկում, որտեղ տեղավորված է եղել եղբոր ընտանիքը:

Բրաբիոն գրչուհին իր աշխատասիրությամբ և ձեռագրերի ընդօրինակությամբ, եղած գրչուհիների մեջ իր առանձնահատուկ տեղն է գրավել: Մեր գրչուհիներից և ոչ մեկը այնքան մեծ քանակությամբ ձեռագրեր չի ընդօրինակել, որքան Բրաբիոնը: Բանասեր Հրանտ Ասատուրը գրել է. «Այս կինը, որ իր եղբոր հետ մանկատուն մը կվարեր Պալատ ԺՂ դարուն վերջերը և ԺԹ-ի սկիզբները, ընդօրինակած է բավական թվով ձեռագիրներ, որոնցմե հերկուքը Վիեննայի վանքը կգտնվին, մեկ քանին ալ Արմաշու վանքը և Պալատու եկեղեցին: Ես առիթ ունեցած եմ տեսնել Պալատու ս. Հրեշտակապետ եկեղեցուն դանձարանին մեջ Բրաբիոն նոտարի խղճամիտ կանոնավորությամբ ընդօրինակված մեկ գրչագիրը, որու ձևավոր տառերը շատ նպաստավոր գաղափար կուտան անոր գեղագրական ճաշակին վրա»¹:

Երկրորդ ձեռագիրը, որ Բրաբիոն գրչուհին ընդօրինակել է դեռևս 22 տարեկան հասակում, Ալեքսանդր Կալամատոյի «Անտառ նուագոյն մտածմանց» աշխատությունն է, որն ընդօրինակել է 1772 թ.: Այն բաղկացած է 390 թերթից, գրությունը նոտրգիր է, դյուրընթեռնելի, գեղեցիկ տառերով:

Գրչուհին եղբոր նման շատ ուշադիր է եղել դեպի իր կատարելիք աշխատանքը: Նա իրեն սոսկ ընդօրինակողի դերում չի պահել, այլև ստուգել է ձեռագիրը և եթե սխալներ է հայտնաբերել, ձեռագրի հիշատակարանում արձանագրել է: Մատենադարանում 2595 համարով գույքագրված Փիլոն Ալեքսանդրացու աշխատության հիշատակարանում (280 թերթ) կարդում ենք. «Հեղինակն մատենիս գաղափարեալ էր ի գաղափարէ, ի էճեւէ թուականի գրեցելոյ յԱրմենի անապատոջ: Բայց թուականն գաղափարեցման և անունն գաղափարողին ոչ էր գրեալ, և երևէին ի տեղիս տեղիս զոլ գրչասխալանք: Բայց սակս խրթնութեան բառիցն և բանից ոչ համարձակեցայ ուղիղ թուեալն ինձ գրելոյ ձեռնամուխ լինել, այլ ըստ օրինակին և ըստ գաղափա-

¹ Հ. Ասատուր, Հայ գրագիտուհի մինչև կիթառ, «Մաղիկ», Կ. Պոլիս, 1906, № 17, էջ 385:

րին գրեցի որպէս յայտնի է յերեսս 343, 344, 348, 360, 361 և այլ բազում տեղիս: Եւ յետ դրելոյ իմոյ դէմ առ դէմ ըստ եղբորն իմոյ և վարժչին Մատթէ զպրին ընթերցայ և արդ ի հանդիպիլն ձեր սղաւանց զրդոյս անմեղադիր ունիլ զԲրաբիոն գրագրութիս աղաւթմ, որ ի ՌՄԼԶ թուականիս յունվարի 31 գրեցի»²:

Որ Բրաբիոն զրչուհին լավատեղյակ է հայ մատենագրութեանը, զրա վառ ապացույցն այն է, որ նա վերոհիշյալ ձեռագրում աշխատել է պարզել Փիլոն Ալեքսանդրացու աշխատութեանն մեկնութեանն մեկի հեղինակի ինքնութեանը, որի անունը նշված չի եղել: Ելնելով այդ մեկնութեան ոճից, նրա մեջ արտահայտված մի շարք դադափարներից, զրչուհին հենվելով իր մատենագրական հարուստ գիտելիքների վրա, մեկնությունը վերագրել է Հովհաննես Սարկավադին (XI—XII դդ.): Նա գրել է.

«Լուծմունք եօթնից գրոցն Փիլոն իմաստասիրի Երրայեցոյ:

Որ ոչ ունի գնոյն դասն՝ զոր բնաբանն ունի, այլ յետ և յառաջ՝ որպէս և ի սկիզբն գրոցս ցուցաբ:

Արարեալ ի մերոց վարդապետաց՝ որպէս ցուցանէ կերպն շարադրութեան: Այլ յումմէ գոլն անյայտ, զի չկայր յօրինակին՝ անուն լուծողին: Բայց զի անկիւնաւոր թուոց խրատն որ ի վերդ է՝ Սարկավագ Հովհաննէս վարդապետն է արարեալ. և ես զայն ըստ սոյն գրոցս և սոյն դասութեամբ ի միում տփոջ գտի. վասնորոյ թուեցաւ ինձ՝ թէ և զայս լուծմունքս նա իցէ արարեալ. քանզի և բանն համանման երեւի նորին շարադրութեանն: Այլ թէ ի նմանէ իցէ և թէ ոչ, սակայն մերոց վարդապետաց երեւի արարեալ:

...ի թուոջ փրկչի ՌԶԷ և ի մերում ՌՄԼԶ [1786]»³:

Ինչպես ցույց է տալիս մասնագիտական ուսումնասիրությունը, իրոք ուր Փիլոնի այդ մեկնությունը կատարել է Հովհաննես Սարկավագը: Բրաբիոն գրչուհու արած ենթադրությունը հաստատում է փիլիսոփայական գիտությունների թեկնածու Գ. Գրիգորյանը իր «Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայերեն մեկնությունները» հոդվածում⁴:

Փիլոնի այս աշխատության ընդօրինակման սլատվերը եղել է էջմիածնից, 1786 թ. նոյեմբերի 21-ին: Բրաբիոն զրչուհին աշխատանքն ավարտում է 1787 թ. փետրվարին, իսկ ապրիլ ամսին այն հասնում է էջմիածին. «Զոր ըստ բնաբանին օրինակել ետու ի Կոստանդնուպոլիս, ամենանուստ Իսահակ և պիսկոպոս Գեղամացի: Ի թուոջ փրկչին՝ ՌԶԷ և ի մերում ՌՄԼԶ—1786:

1790 թ. այս ձեռագիրը կազմվում և հանձնվում է էջմիածնի Մատենադարանին: Ձեռագրի առաջին էջի վրա նկարված է կիսախորան, իսկ ձեռագրի էջերում կան ծաղկանկարներ, որոնց ուսումնասիրությունը թողնում ենք մասնագետներին:

Բրաբիոնի ձեռագիրը ընդօրինակությունները ցույց են տալիս, որ նա տիրապետել է զրչության արվեստին և աչքի է ընկել իր պարզ ու գեղեցիկ ձեռագրով: Երբ համեմատում ենք նրա ընդօրինակած ձեռագրերն ակնառու է դառնում զրչուհու աստիճանական դարձումն արվեստի մեջ: Գրչական աշխատանքը, որը կատարվել է դժնդակ պայմաններում, նրան արգելք չի հանդիսացել կատարելագործելու իր սիրած դրամունքը: Իր գործին նվիրված ու

² Մատենադարանի N 2595 ձեռագիր, 280 տ:

³ Նույն տեղում, 241 ր:

⁴ «Բաների Մատենադարանի», N 5, Երևան, 1960:

աշխատասեր գրչուհին հետագա սերունդներին թողել է մի խոշոր ժառանգություն:

Բրաբիոն գրչուհու ընդօրինակություններից մեղ հայտնի են 16 ձեռագրեր, որոնք ցրված են տարբեր երկրներում. դրանցից հետևյալ յոթը գտնվում են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ «Մատենադարանում»:

1 «Անտառ նորագոյն մտածմանց», թերթ՝ 395, ժամանակ՝ 1772 թ., Կ. Պոլիս (գույքահամարը՝ 377):

2 «Ժողովածոյ», թերթ՝ 152, ժամանակ՝ 1780 թ., Կ. Պոլիս (գույքահամարը՝ 2851):

3 «Քարոզք Մինասայ վարդապետի վաղարշապատացոյ», թերթ՝ 495, ժամանակ՝ 1782 թ., Կ. Պոլիս (գույքահամարը՝ 2608):

4 «Մեկնութիւն Եսայեայ», թերթ՝ 157, ժամանակ՝ 1785 թ., Կ. Պոլիս (գույքահամարը՝ 4934):

5 «Գիրք Փիլոնի իմաստասիրի Եբրայեցոյ», թերթ՝ 281, ժամանակ՝ 1786—1787 թթ., Կ. Պոլիս (գույքահամարը՝ 2595):

6 «Ժողովածոյ», թերթ՝ 390, ժամանակ՝ 1790 թ. (այս ձեռագիրը իր մեջ պարունակում է 3 խորագիր), Կ. Պոլիս (գույքահամարը՝ 436):

7 «Կանոն Միւռօն օրհնելոյ», թերթ՝ 74, ժամանակ՝ 1815 թ., Կ. Պոլիս (գույքահամարը՝ 2809):

Վիեննայի Մխիթարյան գրադարանում կա երկու ձեռագիր.

1 «Տոմար Հարցողական» Մատթեոս դպիրի, անթվական, գրված Կ. Պոլսում:

2 «Կանոնագիրք այբուբենական» Յակոբ դպրի, 1812 թ., Կ. Պոլիս:

Այս երկուսն էլ նա գրել է իր եղբոր՝ Մատթեոս դպրի հանձնարարությամբ: Երուսաղեմի հայկական մատենադարանում Բրաբիոն գրչուհու ընդօրինակածներից կան հետևյալ ձեռագրերը.

1 «Մեկնութիւն հնգամատենի» Վարդան վարդապետի, գրված Կ. Պոլիս, 1770 թ.: Սա գրչուհու ձեռքով գրված առաջին ձեռագիրն է:

2 «Մեկնութիւն երգոց երգոյն» Վարդան վարդապետի, 1780 թ.:

3 «Մեկնութիւն Մատթէոսի» Ներսես Շնորհալու, 1781 թ., Կ. Պոլիս:

4 «Քարոզգիրք» Նալեան Հակոբ պատրիարքի, 1788 թ., Երուսաղեմի միաբան Բաղդասար վարդապետի համար:

5 «Վաստակ ոսկեղէն» Սամուել Ռաբբիի, Կ. Պոլիս, 1812 թ.:

Կոստանդնուպոլսում, որտեղ ապրել և գործել է գրչուհին, մեղ հայտնի է նրա ընդօրինակած երեք ձեռագիր.

1 «Պատմութիւն ժողովոց Եփեսոսի եւ Քաղկեդոնի», 1772 թ., Պալատի ս. Հրեշտակապետ եկեղեցում:

2 «Պատմութիւն ժողովոց», 1774 թ., ձեռագիր Պալատի ս. Հրեշտակապետ եկեղեցու, 90 էջ:

3 «Խօսք յինն երանութիւնն» Գրիգոր Նիսացոյ, 1783 թ.:

Գրչուհին վերջին ձեռագիրը ընդօրինակել է 1815 թ., այսինքն 65 տարեկան հասակում:

5 «Վիեննայի ձեռագրաց ցուցակ», էջ 895, 935:

6 Ն. Եսայ. ծովական, Հայ գրչուհիներ, «Սիոն», Երուսաղեմ, 1954, էջ 135:

Բրաբիոն գրչուհին ապրել է 77 տարի և գտնվել է տնտեսապես շատ ծանր պայմաններում: Դրա մասին է վկայում հետևյալ հիշատակությունը. «...Մատթեոս ու Բրաբիոնն իրենց բոլոր մանկավարժությամբ և մատենագրական ու տպարանական գործունեությամբ հարստություն մը ձգած չէին իրենց ժառանգորդաց: Թողած առձեռն հարստությունն էլ Պալատու տպարանն մայր տառերով ու հարակից գործիքներով, զորս Բրաբիոնի մեռնելուց հետո Արապյան Պողոս աղան 1200 դուրուշի գնահատած ու գնած է»⁷:

Բրաբիոն գրչուհին (1750—1835), որ աշխարհիկ կյանքից հրաժարվելով, իրեն ամրողջապես նվիրել էր մանուկների դաստիարակման, գրականության հրատարակման և ձեռագրեր ընդօրինակելու ծանր ու պատասխասատու աշխատանքներին, մահացավ 1835 թ. ու թաղվեց Եղբոր մոտ՝ Կ. Պոլիս էտիրենեզաբուի գերեզմանատանը, իրենց կողմից վաղօրոք պատրաստված դամբարանում:

⁷ Ա. Հ. Այվազյան, Շարհայ կենսագրություն, 1893, Կ. Պոլիս, էջ 105: